ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2022 թվականի մարտի 9-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում։
2. Հեռակա ուսուցման «Կիրառական հոգեբանություն» մասնագիտացմամբ մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին։
3. Սոց. հարցումներ։
4. Տպագրության երաշխավորման հարց։
5. Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի և քարտուղարի ընտրության հաստատում։
6. Պրոֆ. Ա. Մանասյանի զեկուցումը «Տնտեսական մարդու և քաղաքական մարդու հակամարտությունը» թեմայով։
7. Ընթացիկ հարցեր։

1. Լսեցին 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփումը։ Ա. Բաղդասարյանը նշեց, որ հեռացվել են 3 ուսանող՝ 1 հոգի մագիստրոսական ծրագրով սովորող և 2 հոգի բակալավրիատից։

2. Ա. Բաղդասարյանը քննարկեց հեռակա ուսուցման «Կիրառական հոգեբանություն» մասնագիտացմամբ մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները։ Ընդհանուր առմամբ արդյունքները բարձր էին։ Ողջունելի է, որ 13 հոգուց 5-ը արժանացան կարմիր դիպլոմի, իսկ 6 հոգի ստացան 18-20 միավորներ։

3. Ինչ վերաբերում է սոց. հարցումներին, Ա. Բաղդասարյանը նշեց, որ շատ քիչ քանակությամբ ուսանողներ են մասնակցել։ Հեռակա բաժնում սովորողները ընդհանրապես չեն

մասնակցել։ Ն. Խաչատրյանը առաջարկեց այդ հարցը կարգավորել ՈՒԽ-ի անդամների, ուսանողների օգնությամբ։

4. Ն. Խաչատրյանը առաջարկեց երաշխավորել տպագրության Լ. Բաղդասարյանի և Ա. Սողոյանի կողմից կազմված ձեռնարկը «Վշտի հաղթահարումը Ռիքավերի մոդելով»

5. Հաստատեցին ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի և քարտուղարի ընտրության հարցը։ Նախագահ ընտրվեց հոգեբանության 2-կ. ուսանողուհի Անահիտ Ամիրջայանը, իսկ քարտուղար՝ փիլիսոփայության 2կ. ուսանողուհի Դիանա Գևորգյանը։ Առաջարկվեց քննարկել խորհրդականի հարցը, որը 6 տարի ղեկավարել է Դ. Սարգսյանը։ Տրվեց 1 շաբաթ ժամանակ նոր խորհրդատու նշանակելու համար՝ այս անգամ ռոտացիայի սկզբունքից ելնելով, փիլիսոփայության բաժնից։

6. Լսեցին Պրոֆ. Ա. Մանասյանի զեկուցումը «Տնտեսական մարդու և քաղաքական մարդու հակամարտությունը» թեմայով։ Առաջարկեցին ծանոթանալ թեմայի շուրջ Պրոֆ. Ա. Մանասյանի հոդվածներին և քննարկել այն։

7. Ընթացիկ հարցեր։

Ա. Բաղդասարյանը նշեց, որ փիլիսոփայության մագիստրատուրայի ուսանող Համլետ Սիմոնյանը արժանացել է լավագույն ուսանող մրցանակի։

Քննարկվեց ապրիլի 15 -ի կայանալիք էքսպոի հարցը։

Ս. Պետրոսյանը ներկայացրեց տեղեկությունն «Փիլիսոփայության դերի արժևորումը» թեմայով էսսեների մրցույթ ուսանողների համար և համապատասխան 1,2,3 կարգերի մրցանակների սահմանումը։

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան